



ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՄԱՐՏԻՐՈՍ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ՍՈՎԵՏՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



Սովետական Հայաստանի աշխատավորությունը արտադրական բոլոր վերելքով ու անսահման ոգևորությամբ դիմավորեց աշխատավորների դեպուտատների տեղական Սովետների ընտրությունները:

Մարտի 1-ին Երևանը տոնական ցնծության մեջ էր: Գեղեցիկաշեն բազմահարկ շենքերի վրա միութենական կարմիր դրոշակի կողքին ծածանվում էր Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի պետական դրոշակը: Ընտրական տեղամասերի և պաշտոնական շենքերի ճակատները զարդարվել էին մեծ առաջնորդի ու Սովետական պետության ղեկավարների մեծադիր նկարներով և պրակատներով: Կարմիր պաստառներից մեկի վրա կարդում ենք. «Ձայն տալով կոմունիստների և անպարտիակալների Ստալինյան բրկի թեկնածուների օգտին, ընտրողները ձայն կտան այն բանի օգտին, որ մեր սոցիալիստական Հայրենիքը այսուհետև էլ լինի հզոր և ազատ, որ մեր Սովետական պետությունը լինի ուժեղ և անպարտելի»: Եվ իրոք, սովետական քաղաքացիները ձայն են տալիս մինչև վերջ ժողովրդին նվիրված մարդկանց օգտին, ընտրում են տեղական Սովետների դեպուտատներ, որոնք պետք է ծառայեն ժողովրդին, կատարեն նրա պահանջները, ջանան հարազատ երկրի էլ ավելի ծաղկման ու բարգավաճման համար: Եվ ահա այդ խորը գիտակցումը մղում է մարդկանց դեպի տոնականորեն զարդար-

ված փողոցները, դեպի ընտրական տեղամասերը: Մարդիկ շտապում են իրենց ազատ, անկաշկանդ ձայնը տալու իրենց սեփական պետության գործիչների օգտին:

Արդարև, Սովետական Հայրենիքում իշխանությունը պատկանում է աշխատավորներին՝ հանձինս պետական օրգանների, սկսած Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության Գերագույն Սովետից, մինչև քաղաքային ու գյուղական Սովետները, որոնց ընտրության ակտիվորեն, հավասարապես և կատարյալ ազատությամբ մասնակցում են բոլոր քաղաքացիները:

Ստալինյան սահմանադրության 11-րդ գլխում որոշակիորեն սահմանված է.

«Որ, դեպուտատների ընտրություններն ընդհանուր են: ՍՍՌՄ-ի 18 տարին լրացրած բոլոր քաղաքացիները, անկախ ասայական և ազգային պատկանելիությունից, սեռից, դավանանքից, կրթական ցենզից, նստակեցությունից, սոցիալական ծագումից, զույգային դրությունից և անցյալ գործունեությունից, իրավունք ունեն մասնակցելու դեպուտատների ընտրություններին, բացառությամբ խելագարների և այն անձերի, որոնք դատարանի կողմից դատապարտված են՝ ընտրական իրավունքների զրկումով (հոդ. 135):

Որ, դեպուտատների ընտրությունները հավասար են. յուրաքանչյուր քաղաքացի ունի մեկ ձայն. բոլոր քաղաքացիներն ընտրություններին մասնակցում են հավասար հիմունքներով (հոդ. 136):

Որ, կանայք ընտրելու և ընտրվելու իրավունքից օգտվում են տղամարդկանց հետ հավասարապես (հոդ. 137):

Որ, դեպուտատների ընտրության ժամանակ քվեարկությունը գաղտնի է (հոդ. 140):

Որ, յուրաքանչյուր դեպուտատ պարտավոր է ընտրողների առաջ հաշիվ տալ իր աշխատանքի և աշխատավորների դեպուտատների Սովետի աշխատանքի մասին և կարող է ամեն ժամանակ հետ կանչվել ընտրողների մեծամասնության որոշմամբ, օրենքով սահմանված կարգով (հոդ. 142):

Ես այդ իրավունքը առաջին անգամ կենսագործելու երջանկությունն ունեցա մարտի 1-ին (ես արտասահմանից Հայաստան եմ ժամանել 1951 թվականին և սովետական քաղաքացիության արժանացել 1952 թվականին— Մ. Հ.):

Այդ օրը ես ու կինս ներկայացանք Սպանդարյանի ռայոնի № 10 ընտրական տեղամասը: Չնայած վաղ առավոտ էր, բայց տեղամասի մոտ հավաքվել էր խուռն բազմություն. քվեարկելու մեծ իրավունքը կենսագործելու համար հավաքված երկսեռ ընտրողները զվարթորեն խոսակցում են իրար



Ընտրողները քվեարկում են

1953 թվականի մարտի 1-ին տեղի ունեցած Հայաստանի աշխատավորների դեպուտատների տեղական Սովետների ընտրությունները մի անգամ ևս հաստատեցին այն հանրահայտ ճշմարտությունը, որ սովետական քնտրական սխեմներ ամենադեմոկրատականն է ամբողջ աշխարհում, որովհետև նա ապահովում է բոլոր քաղաքացիների համար ընդհանուր, հավասար, ազատ, ուղղակի և գաղտնի քվեարկության իրավունք:

հետ, մինչ ուրիշ շատեր, իրենց ձայնը տալով առաջադրված թեկնածուներին, դուրս են գալիս շենքից, գոհ ու կենսուրախ:

— Գիտե՞ս ինչ, այս ընտրության օրերին իմ սիրտն անհուն հպարտությամբ է լցվում, մտածելով, որ Հայաստանում, տղամարդկանց հավասար իրավունքով ընտրություններին մասնակցում են կանայք, — ասում է կինս, երբ թեկնացուկ բարձրանում ենք տեղամասային շենքի աստիճաններից: — Իսկապես մեղքանում եմ արտասահմանի կա-

նանց, որոնք զուրկ են հասարակական աշխատանքի լայնորեն մասնակցելու իրավունքից:

Նա զգում են, որ իմ հոգին պարուրած նույն երջանկությունն է ապրում նաև կինս: Հիշում եմ արտասահմանում ապրած մեր ծանր օրերը...

Մտել էինք № 10 ընտրական տեղամասի շենքի նախասրահը: Ընտրողների անունները, մեքենագրված մաքուր թղթերի վրա, կախվել էին պատերից՝ շրջանակների մեջ: Մի բուպեի գործ եղավ մեր անունները գտնել այլ ցանկերում: Ներկայացնելով մեր ինքնությունը հաստատող փաստաթղթերը, ստացանք բյուկետները: Ի՞նչպես չքվեարկես այսպիսի ազատ ընտրություններում, ի՞նչպես ամբողջ հոգով թո՞՞՞ ձայնը շտապ ժողովրդի մարդկանց օգտին: Մենք անմիջապես մտածում ենք կնքված քվեատուփին և նրա մեջ գցում բյուկետները: Մենք մեր ազատ ու անկաշկանդ ձայները ավելցնենք պարտիականների և անպարտիականների ստալինյան անխախտ բրդի թեկնածուների օգտին, այն հաստատ հավատով, որ ձայն տալով նրանց, մենք ձայն տված էինք սովետական ժողովրդի բարոյաքաղաքական միասնության ամրապնդման օգտին, մեր Հայրենիքի տնտեսապես, մշակութապես և քաղաքականապես հզորացման օգտին, աշխարհի ժողովուրդների միջև կայուն խաղաղության ընդլայնման և ամրապնդման օգտին, խաղաղություն, որի անհավասարելի արժանիքը, անպարտելի դրոշակակիրն ու անխորտակելի պատվարն է Սովետական հզոր պետությունը:

Գրամատիքական երկրների ընտրական տեղամասերում շատ սովորական երևույթ է ընտրական խաղբությունները, ինչպես՝ անդրազետ ընտրողի հանձնված ընտրական բյուկետներ խեղաթյուրելը, նրբանցքներում ազդեացիա կատարելը, մի անգամ ձայն տված մարդուն ուրիշ մի տեղամասում նորից

ձայն տալը, ընդդիմադիր կողմի ընտրողների անունները, դեռևս ձայն չտված, ընտրական ցուցակից ջնջելը, քվեատուփի մեջ մեկ քվեի փոխարեն 2—3 քվե ներմուծելը, ընտրական տեղամասի նրբանցքներում զինյալ ուժերի պահակ կանգնեցումը, ձախողության դեպքում՝ քվեատուփն առևանգելը, ջարդելն ու քվեաթղթերն անհետացնելը, կարգը պահպանելու նպատակով փողոցներում տանկերի, զրահապատ մեքենաների, զինվորական ջոկատների շրջագայելը և այլն և այլն:

Այնտեղ աշխատավոր խավերը, այսինքն՝ ընտրողների խոշոր մեծամասնությունը փախուստ է տալիս քվեատուփերից, զոհ չդառնալու համար որոշ մարդկանց քմահաճույթին: Ոմանք էլ սպասում են ամենավերջին բուպեին՝ իրենց ձայնը մի քանի ոսկիով թանկ ծախելու համար: Սրա հետևանքը լինում է այն, որ այդ երկրներում, ընտրություններին մասնակցողների ընդհանուր թիվը շատ ցածր է լինում:

Ի հակադրություն, մեր երկրում պետական օրգանների ընտրությունները կատարվում են Ստալինյան սահմանադրության վերահիշյալ հոդվածների համապատասխան ձևով, ամբողջ աշխարհում ամենադեմոկրատականն եղող սովետական ընտրական սիստեմով: Մեր երկրում ընտրողները մեծ ուրախությամբ են մոտենում քվեատուփերին, առանց որևէ արգելքի ու ճնշման ընտրելու իրենց վստահության արժանացած մարդկանց: Դա մեծ իրավունք է ակադեմիայի մեծ երկրի բոլոր քաղաքացիների համար:

Ահա այդ մեծ իրավունքն է, որ կենսագործեց Հայաստանի ժողովուրդը մարտի 1-ին՝ անսահման խանդավառությամբ ու անխախտ միասնությամբ ընտրելով իր սիրելի իշխանությունը՝ հանձնեց աշխատավորների զեպուսատների օկրուպալին, շրջանային, քաղաքային, դուրդական և ավանային Սովետների:

